Գ. — *Գրիգոր Կրօնաւոր*, 1445ին կ'օրինակէ մէկ Սաղմոս, Ստեփանոս Արեղայի խնդրանքով. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 590։

Դ. — *Բաղդասար Աբեղայ*, 1606ին կ'օրինակէ մէկ Մեկնութիւն Մարկոսի, Գրիգոր Տաթեւացւոյ. — Կար., Ցուցակ, Թ. 1268։

Ե. — *Եղիազար Դպիր*, 1634–53.

1. — Յիսուս Որդի, կ'օրինակէ 1634ին, մագաղաթի վրայ, բոլորգիր, «ունի գերիս գեղեցկանկար պատկերս». — Մ. Արք. Սմբատեանց, Գեղարքունի, Վաղարշապատ, 1895, էջ 408։

2. — Յայսմաւուրք, որթագրած է 1653ին, հրամանաւ Հռոմկլայեցի Եղիազար Վարդապետի. Յայսմաւուրքը գրուած է Կ. Պոլիս. Յովհաննէս գրչի ձեռքով. — Թ. Աղբար, Բ., էջ 405։

Զ. — *Բաղդասար Աբեղայ*, 1722ին օրինակած է մէկ Գիրք Հարցմանց Գր. Տաթեւացւոյ. — Կար., Ցուցակ, Թ. 820։

## ԽԻԶԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

*Խիզանի Ս. Խաչ Վանքը գրեթէ աստուպային կեանք մը ունեցած է իբրև հոգևոր և մտաւորական հաստատութիւն և պահ մը միայն փայլած է ԺԴ. դարու վերջերը և ԺԵ. դարու սկիզբները։ Կարճատև այդ շրջանին նշանաւոր հանդիսացած են երկու առաջնորդներ, Յովհաննէս Վարդապետ,* 1388?–1393? *(Փիրղալէմեան, Նօտարք, էջ* 17, 42–3. *Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ* 573), *և Մկրտիչ Կրօնաւոր,* 1401?–1414? *(Նօտարք, էջ* 43. *Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ* 153, 168. *Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ., էջ* 857)։

*Այդ օրերուն Վանքը ունեցած է քաղմաթիւ միաբաններ, որոնցմէ իբրև գրչի մշակներ յիշատակելի հանդիսացած են հետևեալները։*

Ա. — *Ներսէս Դպիր*, 1384ին օրինակած է մէկ Ժողովածու. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 551։

Բ. — *Սէթ Սարկաւագ (Աբեղայ)*, չուրջ 1388ին օրինակած է մէկ Յաղագս Կուսութեան, Գրիգոր Նիւսացւոյ, Յովհաննէս և Կիրակոս քարոզապետաց հրամանով. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 574։

Աւետարան մը կազմած է, 1404ին, Տիկին Հնազանդի պատուէրով. — Փիրղալէմեան, Նօտարք, էջ 20։

Գ. — *Յովհաննէս Վարդապետ, Հռետոր, Նշ. Դպիր*, 1388–1414, որդի Ալէքսան Քահանայի, եղբայր Յակոբ և Պետրոս կուսակրօն քահանաներու, աշակերտ Յովհաննէս և Կիրակոս քարոզիչներու։ Օրինակած է,

1. — Մեկնութիւն Առակաց, Ներսէս Լամբրոնացւոյ, 1388ին. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 573։

2. — Մաշտոց, 1401ին, Մոկաց Գրիգոր Եպիսկոպոսին համար. — Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ., էջ 857։ Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 17։

3. — Ճաշոց, 1401ին. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 18։

4. — Ագաթանգեղոս, 1402ին. — Նօտարք, էջ 17։

5. — Քարոզգիրք Գր. Տաթեւացւոյ, Ստեփանոս Եպիսկոպոսի հետ, 1413–14ին. — Ոսկեան, Գ., էջ 846–7։ Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 168–9։

Դ. — *Մելքիսեդեկ Դպիր*, 1404ին, ընտիր բոլորգրով օրինակած է մէկ Քարոզգիրք Գր. Տաթեւացւոյ. — Կար., Ցուցակ Ձեռ. Էջմիածնի, Թ. 2071։

Ե. — *Ներսէս Երէց*, 1414ին ծաղկած է Ստեփանոս Եպիսկոպոսի և Յովհաննէս Վարդապետի օրինակած Տաթեւացւոյ Քարոզգիրքը. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 169։

Զ. — *Յովհաննէս Կրօնաւոր*, 1408–16, որդի [Ամիրի ?] և Մամխաթունի, աշակերտ և հոգևոր որդի Բարսղի. 1416ին, Հիզանի Ս. Խաչ Վանքին մէջ, օրինակած է մէկ Քարոզագիրք Գրիգոր [Տաթեւացիի]. — Ձեռ. Ս. Յ. Թ. 2179։ Հմմտ. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 189։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@